

Venezia, 18 Maggio 1965

Partecipiamo loro grande dolore uniti preghiere fervidissime suffragio anima eletta Eccellentissimo loro Presule.

Maria, Marcella, Gerolamo, Lino Moro

* * *

S. Martino Lupari, 18 Maggio 1965

Costernatissimo perdita amatissimo Arcivescovo Uluhogian porgo venerabile Congregazione vivissime condoglianze.

Baggio

* * *

Roma, 18 Maggio 1965

Partecipiamo profondo dolore grave lutto Vostra Comunità per irreparabile perdita Eccellentissimo Arcivescovo Uluhogian inviamo sentite condoglianze.

Giuseppe Margotta Famiglia

* * *

S. Zenone degli Ezzelini, 19 Maggio 1965

Seguito grave lutto Vostra Congregazione impossibilitati partecipare esequie Eccellentissimo Vescovo vogliate accettare nostre sentite condoglianze.

Don Dante Tasca, Famiglie Tasca, Rubells

* * *

Padova, 17 Maggio 1965

Partecipando profondo dolore per morte Eccellenza Reverendissima porgo vivissime condoglianze.

Pietro Pellizzari

* * *

Parma, 17 Maggio 1965

Profondamente addolorata invio sentite condoglianze.

Alma Rastelli Parma

* * *

Venezia, 19 Maggio 1965

Uniti nel dolore preghiamo pace anima eletta.

Romano Ballarin

* * *

Venezia, 19 Maggio 1965

Partecipando cordoglio dipartita S. Ecc. Arcivescovo Serapione Uluhogian inviamo sincere condoglianze.

Lydia Bolognesi

Venezia, 18 Maggio 1965

Porgo vive condoglianze perdita benemerito Arcivescovo.

Schileo

* * *

Mogliano Veneto, 19 Maggio 1965

Partecipiamo vostro grande lutto esprimiamo nostre sentite condoglianze.

Cristalmurano

* * *

Venezia, 18 Maggio 1965

Partecipo vivamente al loro lutto.

Agostino Zanon Dal Bo

* * *

Padova, 17 Maggio 1965

Vive condoglianze per morte Vostro amato Vescovo.

Famiglia Veronese

* * *

Venezia, 18 Maggio 1965

Vivamente commosse perdita S. Ecc. Vs. Arcivescovo porgiamo sentite condoglianze.

Sorelle Lilli

* * *

Roma, 19 Maggio 1965

Intensamente rattristato dolorosa scomparsa Vostro amatissimo Arcivescovo elevo pensiero e stinto associandomi lutto Comunità.

Emilio Adani

* * *

Mirano, 18 Maggio 1965

Profonde sentite condoglianze.

Maria, Bruna, Francesco Sagramora

* * *

Mirano, 18 Maggio 1965

Partecipiamo tuo grave lutto sensi profondo cordoglio.

Carla, Leonida Pavan

* * *

Mirano, 18 Maggio 1965

Per la grave perdita tutta la mia comprensione ed un fraterno abbraccio.

Paola Costa

* * *

S. Zenone d. Ez., 18 Maggio 1965

Sentite condoglianze.

Pia e Elda Famiglia Vendrasco

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԳՐԳԾ. ՍՐԱՊԻՈՆ ԱՐԲ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

ՈՒՂՂՈՒԱԾ ՈՒԽՏԻՍ ԸՆԴՀ. ԱՐԲԱՀՕՐ

ՊԵՐՈՒՐ, 21 Մայիս 1965

Գրուած, զուգադիպութեամբ, ճիշտ մահուան օրը հասցեագրեալիմ:

ՊԵՐՈՒՐ, 16 Մայիս 1965

Արհիպիսկոպոս Գերապայժառ Հայր, Հ. Սրապիոն Արք. Ուլուհոգեան

Մինչ սիրելի Միաբանութեանդ մէջ կը տօնուի Ձեր քահանայական Ձեռնադրութեան յիսնամեակը, սիրով կը հասցնենք Ձեզի մեր եղբայրական ջերմ շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները, այս ուրախալի առթիւ:

Պատեհութիւնը ունեցած ենք հետեւելու Ձեր քահանայական կեանքին, գրեթէ անոր սկզբնաւորութենէն:

Ուրախութեամբ դիտած ենք, Ձեր մէջը, օրինակելի զաւակը Երանանորդ Միսիթար Արքայօր, եռանդուն քահանան, զնահատուած դաստիարակը, արթուն, իմաստուն ու խոհեմ ղեկավարը, արժանաւոր Հայրապետը:

Ձեր բեղուն կեանքին բոլոր հանգրուաններուն մէջ առատ եղած են շնորհները, զոր ընդունած էք ի ձեռնադրութենէ, եւ համապատասխան եղած է անոնց արժարժումը Ձեր կողմէն:

Հաճոյքով կը միանանք Ձեր զոհարանական ազօթքին ընդունուած պարգևներուն եւ անոնց միջոցաւ կատարուած բարիքներուն համար:

Կը մաղթենք որ արդիւնաւոր նոր շրջան մը բուրդէք քահանայական եւ եպիսկոպոսական, որուն մէջ միսիթարութիւնն ունենաք, կատարեալ առողջութեամբ, շարունակելու Ձեր նուիրումի կեանքը, ի սպաս Ս. Եկեղեցւոյ, Մեր սիրելի Ազգին, Ձեր արդիւնաւոր Միաբանութեան եւ մեր Նուիրապետութեան:

Այս իղձերով եւ բարեմաղթութիւններով, մընամք եղբայրական սիրոյ ջերմ ողջունելու եւ յարգանք

Արհիպիսկոպոս Գերապայժառ Հայրութեանդ

Ազօթակից

ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԶ. ՊԱԹԱՆԵԱՆ
Կարողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ

Գերպոծ. Արքայօր,

Տակաւին մի քանի օր առաջ խնդակցութեան եւ շնորհաւորական նամակ մը յղած էի Միաբանութեանդ երեք յորելարներուն, եւ դիտմամբ 23 Մայիս 65 թուական զրած էի, որպէսզի յորելարներն օրն իսկ ի հեռուստ իրրեւ ի մօտոյ բարեմաղթութիւններս յայտնէի:

Սակայն, աւա՛ղ, յեղակարծօրէն լսեցինք դոյժը՝ թէ Արհ. Սրապիոն Արքեպ. Ուլուհոգեան ոչ եւս է, թէ յետ երկարատեւ հիւանդութեան, յետ տառապալից հիւանդութեան հանգեաւ ցաւատանջ մարմինը Աստուծոյ ծառային, որ յիսուն տարինուրեք քահանայադործութեամբ, դաստիարակչական եւ վարչական ու առաքելական եռանդով հաւատարմ եւ հեղաբարոյ սպասարկուն եղաւ Ս. Եկեղեցւոյ եւ Ազգիս:

Լուսանորդն Միսիթարի ամէնէն արդիւնալից եւ ամէնէն նշանաւոր զաւակներուն հոյիին կը պատկանի իր այս արժանաւոր եւ բազմապատակ Յաջորդը, որ 29 տարինուրեւ Արքայութեան զըծուարին շրջանին, տնտեսապէս բարգաւաճ վիճակի հասցուց Միաբանութիւնը, ընդարձակեց Ս. Ղազարի կղզեակը, երեսուն նոր միաբաններով ճախացուց Ուխտը, մեծ զարկ տուաւ դաստիարակչական առաքելութեան, սատարեց Հայ Կաթողիկէ թեմերուն, եւ մշակութային ընտիր եւ առատ հունձք մ'ընծայեց Հայ Եկեղեցւոյ եւ Ազգին:

Այսքան արդիւնալից դործունէութենէ ետք, Աստուծոյ ծառան կատարեց նաեւ իր առաքելութիւնը, համբերատար հոգիով. դիտցաւ միշտ աւելի սրբանալի իր ցաւերուն մէջ, իրրեւ կենդանի զոհ մը ճենճերիլ ի սէր Քրիստոսի, ի սէր Ազգին:

Իր քահանայական յիսնամեայ յորելարին նախօրեակին վերացաւ ի մէջը, որպէսզի Աստուծոյ Լոյսին եւ Սիրոյն մէջ մասնակցի մշտնջենաւոր Քահանայութեան յաւերժական ցնձատօնին:

Խոնարհելով անոր յարգելի յիշատակին առջեւ, կը ներկայացնեմ Ձեզի, Գերպոծ. Արքայօր, եւ Ձեր բոլոր ուխտակից միաբաններուն, սրտազին խոր ցաւակցութիւնս, ազօթելով Լուսահոգի Ող-

բացեալին հողոյն համար, միաժամանակ մազ-
թելով բազմաբղին սիրելի Միարանութեանդ ա-
ռաքելական եւ մշակութային նորանոր եւ մեծա-
մեծ նուաճումներ:

Մնամ՝ Ձեր Գերպծ. Արքայութեան
աղօթակից

ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ԹԵՐԶԵԱՆ

Պտրք. Փոխանորդ Կաթողիկէ Հայոց

Պաղատա, 4 Յունիս 1965

Սիրելի Գերապայծառ Արքա՛հայր,

Խոր ցաւով իմացայ «Մասիս» թերթէն՝ Արհի.
Հայր Սրապիոն Արք. Ուլուհոճեանի մահուան դոյ-
ժը, որ ինձի մեծ վիշտ պատճառեց, մանաւանդ
որ 1916ին զասընկեր եղած էինք Հոռոմ, Հաւատոյ
Տարածման Համալսարանին մէջ, ու Տիեզերական
Ս. Ժողովին վերջին երեք նստաշրջանները՝ եղ-
բայրաբար միասին անցուցինք. մեծ կորուստ մըն
է արդիւնաշատ Միարանութեանդ, Հայ Նուիրա-
պետութեան ու Եկեղեցիի: Բարեհաճեցէ՛ք ըն-
դունիլ եղբայրական խորին ցաւակցութիւններս ու
հաղորդել զանոնք Գեր. Գեր. միարան Հայերուն,
խնդրելով Աստուծոյ ողորակել սիրելի նախկին
Արքա՛հայր Սրապիոն Արք. Ուլուհոճեանի յաւիտե-
անական հանգիստ ու մշտնջենաւոր լոյս, ու Ձեզի,
Գերապայծառ Արքա՛հայր, երկար կեանք լի ար-
դեամբ, երկնային մխիթարութիւններով ու պրտ-
գօք բարեօք, ու Սիրելի Միարանութեանդ, մեծ
Մխիթար Արքա՛հայր նման հոգեւոր միարաններ,
զայն հոգեւորապէս ու նիւթապէս զարգացնելու,
պայծառացնելու ու իր սուրբ նպատակին հասցնե-
լու համար:

Եղբայրական կրկին ցաւակցական ու մխիթա-
րական զգացումներով, ու սիրոյ ողջունելու ու Ս.
աղօթից ու յարգանաց հաւաստեօք եմ

Գերապայծառ Արքա՛հայրութեանդ
աղօթակից

ՆԵՐՍԷՍ ԱՐԳ. ԹԱՅՐՈՅԵԱՆ

Վիճակաւոր Կաթ. Հայոց Պաղատա

Հալիպ, 17 Յունիս 1965

Գերապայծառ Հայր,

Սրտի խոր ցաւով ստացանք դոյժը մահուան
Արհի. Սրապիոն Արքեպ. Ուլուհոճեանի: Վեհե-
տիկի Մխիթարեան Միարանութիւնը եւ նուիրա-
պետութիւնս մեծ կորուստ կրեցին Հանդուցեալին
սուրբ եւ օրինակելի մահուամբ:

Թող Աստուած հանգիստ յաւիտեանական պար-
գելէ անոր բարի եւ բազմաբղին հոգւոյն եւ չը-

նորհէ վաստակաւոր Միարանութեանդ արժանա-
ւոր յաջորդներ, որոնք ընթանան Հանդուցեալին
առաքինի հետքերուն վրայէն, եւ մխիթարութիւն
ու պարծանք հանդիսանան Եկեղեցւոյ եւ Ազգին:

Հաճեցէ՛ք ընդունիլ, Գերապայծառ Հայր, իմ եւ
կղերիս խոր ցաւակցութիւնները եւ հաւաստիքը
եղբայրական սրտաբուխ աղօթքին որպէս զի Ամե-
նապնդման Աստուած հանգեցնէ անոր հոգին Յա-
ւիտեանական Երանութեան մէջ եւ օրհնէ ու ծաղ-
կեցնէ Մխիթարեան սիրելի Միարանութիւնը:

Եղբայրական ջերմ սիրոյ ողջունելու եւ յարգա-
նօր մնամ

Գերապայծառ Հայրութեանդ
աղօթակից

ԳԵՈՐԳ ԱՐԳ. ԼԱՅՆԵԲԵԱՆ

Վիճակաւոր Բեքիոյ

Թեհրան, 31 Մայիս 1965

Գերապայծառ Հայր,

Մի շարաթ է որ կը զանուլմ թեհրան: Այս ա-
ռաւոտ միայն 30 Մայիս թիւ «Մասիս»ի առաջին
էջի վրայ նշմարեցի ցաւօք՝ մեր բոլորի սրտին,
սիրելի եւ այժմ ողորակելու Արհի. Սրապիոն Արք.
Ուլուհոճեանի ազնուազրոյժ դէմքը: Յուզումնա-
ւոր վայրկեան. փակեցի աչքերս պատկերացնելու
եւ վերադրելու համար այն յոյսերով լի օրերը,
երբ ծրարուած էր բանալ Զիրոյան գիշերօթիկ
դպրոց թեհրանի շրջակայքում: Նրա ժամանումը
թեհրան, Հայր Աթոռապետ հեռ, 21 Դեկտ. 1958:
Հիմնադրի օրհնութիւնը՝ 2 Յունուար 1959 -
Զուլալի այցելութիւնը՝ 5 Յունուար եւ Հանգի-
սաւոր Պատարազ եւ Մկրտութեան արարողութիւ-
նը՝ Յին - Վերադարձ թեհրան՝ 7 Յունուար - 16
Յունուար անմոռանալի «Մխիթարեան Օր» գեղ-
արուեստական երեկոյթ ի պատիւ ողորակելու հան-
դուցելոյն - 18 Յուն. ունեցողութիւն Պարսից Ծա-
հի, եւ բաժանման հրաժեշտ 19 Յունուար. թող
նելով մեր սրտին մէջ համակրելի անուշադրաւ
նկարագրի յիշատակը եւ անկեղծ ժպիտով առինք-
նող նայուածքը:

Հաճեցէ՛ք ընդունիլ Դուք, Գերապայծառ Հայր,
ինչպէս Միարանութեան բոլոր Յարգելի Հայրերը՝
խորին ցաւակցութիւնս: Օրհնեալ եղիցի նրա յի-
շատակը. հանգիստ յաւիտեանական նրա հոգւոյն եւ
երկնային փառապատիւն՝ ի վարձատրութիւն նրա
առաքելական աշխատանքի ի փառս Աստուծոյ եւ
ի փրկութիւն հոգւոյն:

Եղբայրական ողջունելու եւ փոխադարձ աղօթիք:

Աղօթարար

Յ. ԵՊՍ. ԱՐԳԱՐԵԱՆ

Վիճակաւոր Սպախանու Թեմի

Հոռոմ, 23 Մայիս 1965

Ամենապատիւ յոյժ սիրելի Արքա՛հայր,

Թորինոյէն երէկ միայն դարձայ՝ ուր գացած
էի հայրապետական պաշտամունքի համար, եւ
սրտի խոր ցաւով կարգացի հանգիստն ի Տէր Գե-
րապայծառ Արք. Ուլուհոճեան նախկին Արքա՛հայր
Մխիթարեան հայ Միարանութեան: Ահազին է ամ-
բողջ հայութեան կորուստը, բայց մեր սուրբ հա-
ւատքի լոյսի օգնութեամբ զիտելով կը տեսնենք
որ երկնքի թաղաւորութեան մէջ թէ՛ Մխիթարեան
Միարանութիւնը եւ թէ՛ ամբողջ հայութիւնը նոր
եւ զօրաւոր բարեխօս մը կը վաստակին:

Ընդունեցէ՛ք ամենախորին ցաւակցութիւններս:
Իր հոգւոյն համար երեք պատարազ պիտի մատու-
ցանեմ:

Եղբ. Կիւրեղ ՅՈՎՀ. ԵՊՍ. ԶՕՀՐԱՊԵԱՆ

Գահիրէ, 25 Մայիս 1965

Արհի. Գերապայծառ Տէր,

Սրտի խոր յուզումով եւ անհուն վշտով իմա-
ցանք մահը Գերապայծառ Սրապիոն Արքեպ. Ու-
լուհոճեանի, որ վարած էր Միարանութեանդ Ընդ-
հանրական Արքայութեան փափուկ եւ պատասխա-
նատու պաշտօնը առաջին ընտրութենէն ետք երեք
անգամ վերընտրուելով:

Հանդուցեալ Արքա՛հայր հեղաբարոյ անձը եւ բա-
րի նկարագրիւր ծանօթ էին ամէնուն, ինչպէս նաեւ
իր մտային պայծառ կարողութիւնները, որոնց
հետ միացած էին հայրական սէրը, վարչական բա-
րեմանութեանց հետ իր կրօնաւոր խորունկ հա-
ւատքը եւ խանդավառ Հայու ոգին: Իր իմաստու-
թիւնը եւ բարձր արժանիքները զինք սիրելի դար-
ձուցած էին ոչ միայն ամբողջ Միարանութեան,
այլ նաեւ ամբողջ հայ ժողովուրդին:

Մեծն Մխիթարի արժանաւոր յաջորդութեան
մէջ Հանդուցեալին Արքայութեան երկար տարի-
ներուն փայլուն ընթացքին՝ Վեհեպետի Միարա-
նութիւնը բոլորեց բարգաւաճ շրջան մը Միարա-
նական պայծառութեան, ազդեցութեան գործունէու-
թեան, վանական կեանքի օրինակելի կարգապա-
հութեան, քահանայական առողջ նոր սերունդի մը
պատրաստութեան, տնտեսական վերելքի, Ս. Ղա-
զարու կղզիին տարածութեան ընդարձակումին,
Հայ մշակութիւնը նոր թափով մը զարգացման, Մխի-
թարեան Միարանութեան բարոյական վարկի բար-
ձրացման, ինչպէս նաեւ ի արիւնտ հայաշատ կե-
դրաններու հաստատութեան: Հանդուցեալ Արքա-
հայրը, կրկնելով Հեթանոսաց Առաքելին խօսքը,
կատարեց իր ընթացքը, իրեն կը մնայ փառաց
պատկը:

Հաճեցէ՛ք, Գերապայծառ Տէր, ընդունիլ, այս

աղթիւ, մեր անձնական, մեր կղերին եւ մեր Հայ
կաթողիկէ Համայնքին խորագրաց ցաւակցութիւն-
ները եւ զանոնք հաղորդել Հայ Ժողովուրդին սի-
րելի Մխիթարեան Միարանութեան բոլոր անդամ-
ներուն:

ՌԱՓԱՅԷԼ ԵՊՍ. ՊԱՅԵԱՆ
Վիճակաւոր Կաթողիկէ Հայոց
Եզիպոսի

Մարտի, 24 Մայիս 1965

Գերապայծառ,

Խոր ցաւակցութիւններս Ուխտիդ: «Յառաջ»էն
իմացայ բոլոր վախճանումին՝ Ուլուհոճեան Գե-
րապայծառին, որուն յիշատակը քաղցր է սրտիս
մէջ:

Հանգիստ՝ իր նշխարներուն, լոյս՝ իր հոգւոյն
եւ օգտաւէտ կեանք Ուխտիդ բոլոր անդամներուն:
Յիշատակն իւր օրհնութեամբ եղիցի:

Եղբայրական Սիրոյ Ողջունելու՝
ԱՐՏԱԽԱԶՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Անքիլիս, 25 Մայիս 1965

Սիրելի Գրպծ. Հայր Հմայեակ,

Սրտի խոր կսկիծով իմացայ մահը ամենասի-
րելի Ուլուհոճեան Արքա՛հայր, որուն անձին ճառա-
գայթող հայկական քաղցրութիւնը անջնջելի հետք
թողուցած է հոգեկան ապրումներու մէջ, որոնք
այլեւս անմոռանալի յիշատակներու պիտի վերած-
ուին:

Ծանօթութեանս առաջին վայրկեանէն մինչեւ
վերջին հանգիստման վերջնադոյն բոլորէն, Վեհե-
տիկէն մինչեւ Հոռոմ, Ս. Ղազարէն մինչեւ Ս. Պե-
տրոս, իր հայրական ու հայկական ջերմ հոգին
զրաւոյթեան անոյժ ոյժով մը զիս կապուած պա-
հեց իրեն եւ իր մէջէն Վեհեպետի Մխիթարեան
շունչին:

Հին սերունդին եւ նորին միջեւ հոգե-կամուրջ
եղող անձն էր ինք քրիստոնէական թաքտութեամբ
եւ հայու նախանձախնդրութեամբ սողողութեամբ:
Գիտէր ըմբռնել դարու փոփոխութիւններն եւ
կեանքի նոր պահանջները եւ միանգամայն ամուր
պահել աւանդութեան եւ հայրենական ժառանգու-
թեան ոգին որ միութեան կապն է հայ դարերուն
մէջէն անցնող ոսկեթելի նման:

Վստահ եմ, իր յիշատակով լեցուն Միարանու-
թեանդ անդամները, Ձեր անձին չուրջ բոլորութեամբ,
իր մահէն իսկ նոր ոյժ պիտի ստանան առաւել
նուիրումով եւ անձնորդի զոհողութեամբ բարձր
պահելու փառքը Մխիթարեան Ուխտին, ատոք եւ
առատ հունձքի ընծայարարութեամբ առ Աստուած
եւ առ ազգն մեր հայկազնեան:

Երկնաւոր Հօր լուսեղէն օթեաններուն մէջ թող հանգչի իր ամբիժ հողին եւ թող առաւել եւս ծաղկի ծառայութիւնը Մխիթարեան Ս. Ուխտին ի հաճոյս Աստուծոյ եւ ի բարգաւաճումն Հայ ժողովրդին:

Մաղթելով Զեղի առողջ եւ երկար օրեր ու բեղուն դործունէութիւն,

մնամ սիրոյ ողջունելու աղօթակից
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Զմմառ, 27 Մայիս 1965

Արհիպատիւ Գերապայծառ Տէր,

Սրաի խոր ցաւով իմացանք վաստակաւոր Գերապայծառ Սրապիոն Վրդ. Ուլուհոցեանի մահուն զոյժը մինչ կը պատրաստուէինք տօնելու աւոր քահանայական ոսկի յորեկանը: Օրհնելով ըլլայ Աստուծոյ Կամքը: Պէտքով Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ անոր հողոյն համար մատուցուած հանդիսաւոր պատարագին եւ հանգստեան պաշտօնի մասնակցելէ ետքը կու գամ յանուն Մխիթարեան թեանս յայտնելու Արհիպատիւ Տէրութեանդ մեր ամէնուն խորին ցաւակցութիւնները. մաղթելով որ Ամենաբարին Աստուած յարուցանէ Մխիթարեան Զեր Մխարանութեան մէջ հանգուցեալին նման վեհանք, առաքինի, անխնայ աշխատող, հայրենասէր եւ մանաւանդ Աստուծոյ սիրով տոհմութեան թաղմաթիւ հողիներ:

Հայցելով Գերապայծառ Սրապիոն Վարդապետին յաւիտեական հանգիստ եւ Զեր վշտակիր սրտին աստուածային մխիթարութիւն

մնամ Արհ. Տէրութեանդ աղօթարար

ՅՈՎՀ. Վ. ՊԱՍՄԱՃԵԱՆ
Երեւանի Զմմառու վանքին

Նիւ Ժըրսի, 19 Մայիս 1965

Գեր. Արքայապետ եւ Եղբարք

Ճիշտ հիմա իմացայ լրագրական տեղեկատուութենէ՝ զոյժը վախճանումին նախկին Արքայապետ Գեր. Սրապիոն Արքեպիսկոպոս Ուլուհոցեանի, զոր անձամբ ճանչնալու պատիւը եւ առանձնաշնորհումը ունեցած էի անցնող տարիներուն, եւ զոր կը սիրէի եւ կը յարգէի անկեղծ սրտով որպէս բարեկամ մը եւ որպէս արժանաւոր յաջորդ անմահ Մխիթար Արքայի, մեր ազգին ամէնէն պողատու հաստատութեան առաջնորդութիւնը վաւերելու:

Կը խնդրեմ որ ընդունիք իմ ցաւակցութիւններս ձեր այս կորուստին համար: Անուն մըն ալ կ'անմահանայ այն անմահներուն շարքին՝ որոնք

ձեր երբեմնի եղբայրները եղած են եւ իրենց ամբողջ կեանքովը եւ կողման տաղանդներովը ծառայած են ազգին, որուն սէրը ոչ ուրեք եւ ոչ ոքի մէջ զերազանցուած է, ըստ իմ կշռոյս:

Մենք, հայերս, առանց զաղափարական կամ դաւանական խտրութեան, միայն երախտիք պարտինք Մխիթարեանց՝ սա՛ անցեալ՝ մօտ երեք դարերու ընթացքին՝ անոնց մատուցած անդին եւ երկրի ծառայութեանց համար:

Կը խնդրեմ որ հաճիք ընդունիլ տրուելիս ցաւակցութեան զղացումներուն հետ նաեւ անձնական երախտիքս եւ սէրս զորս կը համարձակիմ ձեր ոտքը զնելու այս ախուր առթիւ:

Տէր Աստուած ձեզի տայ մխիթարութիւն եւ երկար կեանք Մխիթարեան նուիրական դործը շարունակելու ընդ միշտ:

Անկեղծ սիրով եւ աղօթքով

Զերդ

Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ

Պետ Հայ Աւտրի. Եկեղեցւոյ Նիւ Եորք

Պէյրուս, 26 Մայիս 1965

Գերապատիւ Արքայապետ,

Մեծ ցաւով իմացայ Պէյրութի հայ մամուլէն Արհ. Ուլուհոցեան Սրապիոն Արքեպիսկոպոսին մահուն լուրը: Երկար տարիներ վարեց Մխարանութեան արքայապետութիւնը: Ամէնուն յարգանքն ու սէրը հանգուցեալին հանդէպ կ'ապացուցանեն թէ՛ անոր վարչական կարողութիւնը եւ թէ՛ անոր բարութիւնը, որով զրաւած էր սրտերը: Աղօթեցի եւ կ'աղօթեմ տակաւին անոր հողոյն հանգիստին համար:

Լուրը հաղորդեցի մխարանակիցիս՝ Հ. Մօրիս Թալոնին, որ զինքը ճանչցած է. ինքն ալ ինձ կը միանայ աղօթքներով եւ ցաւակցութեամբ:

Մնամ յարգանք եւ աղօթակից

ՅՈՎՀԱՆՆԵՍ Վ. ՄԵՍՐԻՔԱՆ

Վարիչ Հայագիտական Ամբիոնի

Պէյրութի Ս. Ժոզեֆ Հմլի

Թեհրան, 1 Յունիս 1965

Գերապայծառ Տէր,

«Մասիս»ի միջոցով իմացանք տխուր լուրը մահուն նախկին Արքայապետ՝ Արհիպատիւ Սրապիոն Արք. Ուլուհոցեանի: Սրապիոն վշտակցում էր Մխիթարեան Մխարանութեան կրած այս մեծ կորուստի համար: Դեռ եւս խորապէս զրոշմուած է իրեն ճանաչող բոլոր Թեհրանի հայերի սրտերում:

նրա բարի, մշտապիտ դէմքը եւ հեղահամբոյր բնաւորութիւնը: Ամենաբարին Աստուած վարձահատոյց լինի նրա արդիւնաւոր կեանքին:

Մինչ ողբում ենք նրա կորուստը եւ յայտնում Թեհրանի մեր Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութեան կողմից մեր սրտազին ցաւակցութիւնները Վենետիկի բաղձարդին Մխարանութեան, մաղթում ենք նրա արժանաւոր յաջորդին՝ Աստուցոյժ, կարողութիւն եւ առողջութիւն, ղեկավարելու Հայութեան պարծանք, վաստակաւոր բաղձարեան Մխիթարեան Մխարանութիւնը:

Զերմ ցաւակցական զղացումներով

եւ խորին յարգանք

ՄԱՆՈՒԷԼ Ծ. ՎՐԴ. ՓՈԼՍԵԱՆ

Ժողովրդապետ

Թեհրանի Կաթողիկէ Հայոց

Venezia, 18 maggio 1965

Reverendissimo Padre Abate,

All'omaggio reso oggi alla salma venerata dell'Eccellentissimo Arcivescovo, aggiungo le mie condoglianze vivissime a Lei, Reverendissimo Abate, alla Comunità Mechitarista e a tutta la Comunità Armena.

Martedì scorso ero stato all'ospedale a fare visita all'illustre ammalato; quale lezione! Fu per me motivo di edificazione! Beati mortui qui in Domino moriuntur!

I vostri morti sono per voi esempi davvero luminosi.

Con ossequio devoto in Corde Jesu.

Sac. GINO SPAVENTO

Pro Vicario Generale

del Patriarcato

di Venezia

Venezia Lido, 18 maggio 1965

A S. E. Reverendissima

Presentiamo commossi all'E. V. Rev.ma le più vive cristiane condoglianze per il ritorno alla Casa del Padre di S. Ecc. Mons. Arcivescovo Serapione Uluhogian, la Cui presenza fra noi era sentita nella persona dei buoni Padri Mechitaristi che inviava puntualmente e con tanto amore per la direzione spirituale dei nostri ragazzi e giovani.

Il bacio che la sera del 16 corr. umilmente diedi alla mano ormai inerte dello Scom-

parsò, voleva essere un caldo ringraziamento di tutta la nostra comunità giovanile e una fiduciosa speranza che dal Cielo dei Giusti, che avrebbe poco dopo raggiunto, avrebbe continuato ad amarci e a proteggerci.

Mentre preghiamo l'E. V. Rev.ma di estendere a tutta la Comunità dei Padri Mechitaristi questi nostri sinceri sentimenti, promettiamo di corrispondere sempre più ai nostri doveri e assicuriamo pii suffragi per l'Anima del desideratissimo Scomparso.

Benedica l'E. V. Rev.ma ai nostri devoti propositi.

p. IL GRUPPO A.S.C.I. LIDO 1°

L'Assistente Ecclesiastico di Gruppo

Sac. AMADEO VIAGGI

Lido, 17 mai 1965

Révéréndissime Père Abbé,

Depuis déjà longtemps nous prions pour Son Excellence que nous savons malade. Mais voilà maintenant ravie à votre famille religieuse Celui que tous vénéraient et aimaient.

Son Ciel sera beau après une vie si bien remplie, mais pour vous, le vide doit être bien sensible. Nous prions donc pour le vénéré défunt mais aussi pour vous, mon Révérend Père et vos religieux qui sont atteints par ce deuil et cette séparation douloureuse.

Je vous prie, mon très Révérend Père, d'agréer avec les religieuses condoléances de la Communauté, l'humble hommage de mon profond respect.

Votre humble servante en N. S.

CECILE MARIE DE JESUS

S. V. C. de J.

Venezia, 17 maggio 1965

Eccellenza Reverendissima,

Apprendo con vivo dolore la notizia della morte del Votsro Amatissimo Arcivescovo.

Di Lui conoscevo le elette virtù. l'intelligenza somma, il grande amore per la cultura, e sapevo che molte benemerenze Egli s'era acquistato nei vari periodi della Sua attività con varie mansioni, fino al grado abbaziale, nella Vostra Congregazione.

Porgo quindi a Lei, Eccellenza, per la Congregazione tutta, le mie più vive e com-

mosse condoglianze, promettendo una prece per l'Anima che il Signore ha voluto chiamare a sé.

Gradisca, Eccellenza Reverendissima, i miei migliori ossequi.

Prof. FRANCESCO SEMI
Devotissimo

Venezia, 21 maggio 1965

Eccellenza Padre Abate Generale

RR.mi Padri,

sta in Dio - nella Luce, nella Pace - l'Anima eletta dell'Arcivescovo Mons. Serapione Uluhogian, il suo Frate nel loculo del tanto prezioso Cimitero di S. Lazzaro, ma il ricordo è vivo per coloro che hanno conosciuto questo pio e illustre Monaco, Abate, Arcivescovo.

Vivrà, dunque, la di Lui memoria non solo nella Comunità Mechitarista e negli Armeni tutti, ma pure in quanti lo conobbero in varie Nazioni, particolarmente, poi, qui a Venezia.

Desidero rinnovare - anche a nome dei miei familiari - le più vive e sentite condoglianze, che vengono dal cuore, a tutta la Comunità di San Lazzaro.

Dio tutti ci benedica!...

Giornalista Prof. GIOVANNI VENNI

Ֆիբեմբր, 18 Մայիս 1965

Գերապայծառ Տէր,

Ձեր անկողնի մասնակցելը Ձեր տխուր արարողության, բարեհաճեցէ՛ք ընդունել խորին ցաւակցութիւններս Ձեր նախկին Արքայօր եւ բարի Հօր մահուան առթիւ. կ'աղօթեմ իր աղիւ հոգւոյն առ Աստուած, խնդրելով որ ընդունի զնա իր արքայութեան մէջ:

Մնամ Ձերդ աղօթարար
եւ երախտադէտ ծառայ
Տէր ԳԱԶԻՄԻՐ Վ. ՌՈՇՔՈՅ

Լք Ռէնսի, 24 Մայիս 1965

Գերապայծառ Հայր,

Անուն վշտով կարգացինք Միաբանութեանդ վաստակաւոր Արքայօր՝ Գեր. Ս. Ուլուհոյանի մահուան տխուր լուրը:

Ողբացեալը ոչ միայն պետք էր ազգանուէր Միաբանութեան մը, այլ նաեւ հեղինակն էր կարեւոր դործերու: Եղած է նոյնպէս արժէքաւոր դաստիարակ մը: Հետեւաբար որեւէ մէկէ աւելի կրթական Հիմնարկութիւն մը կը զգայ մեծութիւնը կորուստին, որուն է՝ թարգմանած է Ձեր Միաբանութիւնը:

Գերապայծառ Հայր, կը բաժնենք ամբողջովին ձեր սուգն ու վիշտը եւ կը խնդրենք որ բարեհաճէք ընդունել եւ հաղորդել նաեւ Միաբանութեան Միաբանութեան բոլոր անդամներուն մեր լաւագոյն զգացումներուն հաւատարմութիւնը:

Դպրոցատէր Տիկնանց վարժ. վարչութեան

Ատեմադար
Ս. ՓԻՐՓԻՐԵԱՆ

Ատեմադար
Մ. ՏԱՄԼԱՄԵԱՆ

Փարիզ, 1 Յունիս 1965

Գերապայծառ Հայր,

Խորապէս զղածուած, նախկին Սանուց Միութիւնը իր վարչութեամբ եւ անդամներով, կու գանք մեր սրտադին եւ որդիական ցաւակցութիւնները յայտնելու, մեր սիրելի Դաստիարակին եւ արժանաւոր Արքայօր՝ Գերապայծառ Սրապիոն Արքեպիսկոպոսի մահուան առթիւ:

Մեզմէ շատերուն մտքին եւ սրտին մէջ տակաւին թարմ են իր բարի եւ հայրական խորանները, եւ անջնջելի կը մնան մեզի հետ ունեցած յարաբերութիւններուն պարզութիւնը եւ անկեղծութիւնը:

Աստուած հանգիստ թող պարգեւէ իր յոգնատանջ Մշակին, եւ նորեւ հասցնէ անդարձ մեկնողներուն տեղ, որպէսզի Անմահն Միաբանի դործը յաւերժանայ, կրօնքի եւ Հայրենիքի զոյգ խորաններու սպասարկուներով:

Խորին ակնածանքով համբուրելով Գերապայծառ Արքայօր Սուրբ Աջը

Վ. ՊԱՐԿԻՐՃԵԱՆ

Նախագահ Մ. Ռաֆ. ի ճախկին Սանեբու

Դամասկոս, 18 Մայիս 1965

Յարգելի Արքայօր,

Երկու օր առաջ կարգացի Պէյրութի լրագիրներու մէջ Արքայօր Սրապիոն Արքեպիսկոպոս Ուլուհոյանի մահը, որ շատ մեծ ցաւ պատճառեց ինձի: Հանգուցեալը իմ դասընկերս եղած էր եւ իրարու հետ մեծ յարգանքով կապուած էինք:

Մեծն Աստուած իր սուրբ հոգին Արքայութեան մէջ վարձատրէ իր յոգնութիւններուն եւ ըրած մեծ եւ թանկարկին դործերուն համար, ի սպաս Ազգին եւ Միաբանութեան:

Եւ մենք միշտ աղօթքով պիտի յիշենք զինքը, խնդրելով իրմէ որ միջնորդ ըլլայ Մեծ Աստուծոյ եւ Քրիստոսի քով մեզի համար, միշտ օգնելու եւ զիւրացնելու մեր այս աշխարհի մէջ կատարելիք բարի դործերը:

Կը ներկայացնեմ Ձեզի եւ ամբողջ Միաբանութեան Հայրերուն, որոնք իմ եղբայրներս կը նկատեմ, իմ խորին ցաւակցութիւններս:

Մնամ յարգանք եւ համբուրելով Ձեր Ս. Աջը

ԶՕՐ. ՀՐԱՆՏ ՄԱԼՈՅԵԱՆ

Սան Գրանչիսոյ, 28 Մայիս 1965

Յարգելի Հայրեր,

Երկար ճամբորդութենէ մը վերադարձիս՝ սեղանիս վրայ դրած մահադոյժը Ձեր Միաբանութեան նախորդ Արքայօր, բազմալատակ Եկեղեցականին, անխորակ անգիտելիքներն եւ իմ լաւ բարեկամին՝ Գերապայծառ Սրապիոն Արքեպիսկոպոս Ուլուհոյանին:

Գերապայծառ Հօր կորուստը համազգային է. Միաբանութեանդ հետ կը սգայ զայն մեր ժողովուրդը:

Խնդրեմ՝ ընդունել Տիկին Մարտիկեանի եւ իմ խորազգած ցաւակցութիւնները:

Ձեզ միշտ յարգող՝
ՃՈՐՃ Մ. ՄԱՐՏԻԿԵԱՆ

Տիբրոյի, 27 Մայիս 1965

Արհ. Գերապայծառ,

Շարաթ օրը, Մայիս 22ին, առաւօտեան ժամը 10.30ին նամակաբերէն օդային թղթատարով զըրկուած պահարան մը, Միաբանութեան Մայր Միաբանութեան հասցեագրուած՝ նամակատուփի ձեռքով էր. ձեռքս առի. քիչ մը ծանր էր. սակայն, փակուած էր:

Կսկծալի ու անհաւատալի մահադէն էր շատ յարգելի եւ յաւատ անմոռանալի լուսահոգի նախկին Արքայօր Արք. Սրապիոն Ուլուհոյանի: Ուղեցի ինքզինքս համոզել որ չի կրնար ըլլալ. կարելի չէ որ այդքան եռանդալին եւ արդիւնաւէտ կեանք մը այդքան անակնաւորէն եւ անսպասելիօրէն վերջ գտնէր:

Ինչո՞ւ այսքան արժէքաւոր եւ արժանաւոր կեանքեր այդքան շուտ վերջ պիտի գտնեն...

Լուսահոգին իր արքայօրութեան շրջանին մէջ մէկ մեծ մտահոգութիւն ունէր, Միաբանութեան Մայր Միաբանութեան ազգասիրական, մշակութային եւ կրօնական դործերն ալ աւելի նախանձելի վիճակի հասցնել. եւ այդ ուղղութեամբ աշ-

խատեցաւ եւ տքնեցաւ եւ իր արժանաւոր նախորդներուն նման Շինարար Արքայօր դործեր թողուց, որոնք իր արդիւնաւոր դործունէութեան հայելին են:

Լուսահոգին իր բարեմօտ, բարեհոգ, հեղահամբոյր եւ համբերատար բնաւորութեամբ, զինքը մօտէն ճանչցողները միշտ իրենց սրտին մօտիկ պիտի զգան եւ, միշտ պիտի վերյիշեն իր յաւատ անմոռանալի տիպարը...

Բարեհաճեցէ՛ք ընդունել, Արհ. Արքայօր, իմ խորազգած ցաւակցութիւնները լուսահոգի նախկին Արքայօր Սրապիոն Արք. Ուլուհոյանի զանազան մահուան առթիւ եւ բարեհաճեցէ՛ք զանոնք հաղորդել նաեւ Միաբանութեան Մայր Միաբանութեան Պատուաբեմ վարչական Մարմին, միաբան Հայրերուն եւ վերջապէս համայն Միաբանութեան Մայր Միաբանութեան...

Խորին յարգանքներով

ՅՈՎԱԿԻՄ Յ. Ե. ԳԱՐԻՆԵԱՆ

Թէւնի, 4 Յունիս 1965

Արհ. Գերապայծառ Հայր,

Կամքէս բոլորովին անկախ պատճառներով ուղացուցի զրեւու եւ այս մասին ներողութիւն կը խնդրեմ:

Կրնա՞ք երեւակայել թէ՛ ո՞րքան ցաւ պատճառեց ինձ եւ իմ ընտանիքիս, լուսահոգի Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոյանի մահը: Արքեպիսկոպոսի այս աշխարհէն մեկնումի լուրը:

Շատ յարգելի եւ սիրելի անձ մ'էր ու չէ կարելի երբեք մոռնալ իր բարեացակամ ու հայրական անկեղծ եւ համակրելի նայուածքը, իր պարզ բայց թափանցիկ վերաբերմունքը հանգէպ ամէնուն ու ի մասնաւորի բարեկամ անձերու, որոնք Ս. Ղազարի սրբալոյսը ոտք կը դնէին:

Սրտանց զգացինք այս տարածած կորուստը, պատուական անձի մը, որ զիտէր բնականօրէն շահիլ այցելուին անկեղծ եւ ջերմ համակրութիւնը: Աստուած տայ համակամութիւն բոլոր իր սիրելիներուն, վստահ ըլլալով որ իր անմոռանալի յիշատակը միշտ վառ պիտի մնայ ամէն սրտերուն մէջ, որոնք անձնապէս մեծ պատիւը եւ մեծ առանձնաշնորհութիւնը ունեցած են Ձինքը մօտէն ճանչնալու:

Այս առթիւ, սիրելի եւ զերբարդոյ Արքայօր, ընդունեցէ՛ք իմ եւ իմ ընտանիքին անկեղծ սիրոյ եւ յարգանքի հաւատարմութիւնը:

Խորազգած համբուրելով Ձեր Ս. Մատանին, եւ որդիական ջերմ բարեկամութիւն Ձեզ եւ բոլոր սիրելի հայրերուն:

Միշտ Ձերդ անձնուէր եւ երախտապարտ

ՊԵՏՐՈՍ ՍԻՄՈՆԵԱՆ

Նախկին Աշ. Մուրատ-Ռաֆ. վրժ. ի

Հալեպ, 20 Մայիս 1965

Գերապատիւ Արքայապետ,

Սրտի խոր կսկիծով է որ կը դրեմ սոյն տողերս յայտնելու համար վշտակցութիւնս մեր եւ Ձեր սիրելի Գերապայծառին յանկարծական մահուն համար:

Ամենաբարձր Տէրը թող ընդունի զինքը արդարոց օթեակին մէջ, ուրիշ ան պիտի բարեխօսէ եւ օրհնութիւն սփռէ Մխիթարայ զաւակներուն վերայ: Ան՝ զօրավիշ պիտի ըլլայ Ձեզի, որպէսզի կարենաք վարել ձեռնհասօրէն Ձեր պատասխանատու պաշտօնը:

Պիտի խնդրէի որ մեր ցաւակից զգայունները փոխանցէիք Միաբանութեանը իւրաքանչիւր անդամին, սկսելով Աթոռակալ Հօրմէ, անցնելով Յառաջիկաներուն եւ մասնաւորապէս Հ. Կիւրեղին եւ Հ. Մանուէլին, որոնց զասակիցն էր լուսահոգին:

Ինծի կ'ընկերանայ Արուսեակը, ցաւակից զգայուններու արտայայտման հաղորդակից ըլլալով:

Համբուրելով Ս. Աջերինդ

մնամ աղօթաբար

ԲԺ. Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Նախկին աշակերտ Մ.-Ռաֆ. Վրժ. Ի

Ռիչիքս, 22 Մայիս 1965

Ամենասիրելի Արքայապետ,

Շանթահարուցայ կարգալով Գերապայծառ Սրապիոն Արք. Ուլուհոճեանի մահուն անակնկալ լուրը: Դուք զիտէք թէ ո՞րքան սիրելի էր ինծի, ո՞րքան թանկագին... եւ այժմ այլեւս անոր պիտի չհանդիպիմ մեր պաշտելի վանքին կատարած այցելութեան ընթացքին: Իր հանդարտ ու բարի դէմքը, իր այնքան անոյշ ժպիտով պիտի չզիմաւորէ զիս եւ իմ կեանքիս երջանկազոյն պահերը վանքին մէջ իր մեղի հետ անցուցած այլեւս յիշատակ մը պիտի ըլլան...: Ճաշէն վերջ սուրճի պահին այլեւս պիտի չվախենք իր այնքան սիրելի ներկայութիւնը: Այլեւս զրկուած պիտի ըլլամ իր այնքան բարի խորհուրդներէն, իր սրտարուս մը տեղումներէն:

Ի՞նչպէս բացատրեմ վիշտս ու ցաւս իր կորուստին առթիւ...: Անդամ ձեռացան մեզմէ անփոխարինելի Հայրերը՝ Հացունին, Դադիկեանը, Տէր-Մովսէսեանը, Նահապետեանը, Փէշիկեանը... Ի՞նչ հակադաս կորուստ Հայութեան, Մխիթարեաններուն եւ Ս. Ղազարի համար...: Ողբ ու կալան, լաց ու արցունք պիտի չբաւեն մեր այս կորուստներուն համար: Ահա հիմակ ալ աղուոր, սքանչելի բարութեան, Հայութեան, Մխիթարեաններուն եւ Ս. Ղազարին համար թանկագին կորուստ

մը... եւս՝ մեր բոլորիս այնքան սիրելի Գերապայծառ Ուլուհոճեանի մահուն համար: Թէ՛ Հայիկը եւ թէ՛ Գրիգորը արցունքոտ աչքերով եւ խիստ խորունկ կսկիծով իմացան չարադէտ լուրը:

Ի՞նչպէս մխիթարական խօսք մը ըսեմ Ձեզի, Միաբանութեան... երբ ինքս ա՛յնքան կարիք ունիմ մխիթարուելու թանկագին ու սիրելի բարեկամիս մահուն առթիւ...:

Գիտեմ Ձեր սիրտը իմինչէս մեծ է, կը պահատիմ բերան մը աղօթք ալ ինծմէ խառնէք Ձեր սուրբ Հոգւոյն, եւ վանքին պարտէզէն աննման Հայր Եղիայիս անկած վարդերէն ինծի համար վարդ մը փրցուցէք եւ գերեզմանին վրայ դրէք...:

Եղբայրական անկեղծ սիրով ու կարօտով բոլորը ալ կը համբուրեմ:

Յ. ԳԻՒՐԵԱՆ

Սալցպուրկ, 6 Յունիս 1965

Սրբազնազոյն Գերապայծառ Արքայապետ,

Սրտի ամենադառն կսկիծով այսօր, ան ալ Սր. Հոգեղալստեան տօնին, կը կարգած կսկծալի դոյժը ամէնուն պաշտելի Հոգեւոր Հայր Արքայապետ Սրապիոն Ուլուհոճեան Արքեպիսկոպոսի հանդիստին: Խնդրեմ՝ Մխիթարեան բոլոր Հայրերէն, իմ ալ խորազգած ցաւակցական ներաշխարհի ազդեմունքներս ընդունել:

Հոգեւորս ննջեցեալ մանաւանդ անարժանիս հետ նախ հայրենակցական հարազատ մտերմական սրտի կապերով միացած էր: Իր ծննդավայր Խարբերդի Դատեմ բարձրագոյն անուշիկ գիւղը իմ պատանեկութեան եւ երիտասարդ յիշատակելի օրերուն, քանի՜ քանի՜ անգամ մի կերպ ուխտադնացութեան վայր եղած էր: Հոն կը բղխէր հանքային ջուր մը, որուն մասին բնակիչներ հրաշալան բաներ մը կը պատմէին: Հոն մեզ սիրով ընդունած էր գիւղին բարի գլխաւոր Տէր Վարժապետեան:

Ամոռանալի եղաւ սակայն 1960ին Սուրբ Ղազար Մայրավանքին իմ ուխտադնացութեան առթիւ իրեն ինձ շնորհած տեսակցութիւնը, ուր իր տաքուկ հայրենակցական վերջնամասերուն հետ մեծ հետաքրքրութեամբ մասնակցեցաւ Ներսէս Շնորհալիի Ծովք-Դղեակ հարցի շուրջ կատարուած կարծիքներու փոխանակութեան:

Սակայն ինձ համար մանաւանդ անմոռանալի պիտի մնայ Վիեննայի Մխիթարեաններու երբեակ յորելինական Տօնակատարութեան առթիւ իր եւ ողբացեալ Հայր Փէշիկեանի հետ ունեցած տեսակցութիւնները: Բնաւ պիտի չմոռնամ նաեւ մի որդիական զգացումով իմ տաք համբոյր զրոյմելս իր վեհ ճակատին վրայ, երբ Պէշիկեանի մայր տաճարէն ներս մտան Մխիթարեան երեք Գերապայծառներ, Արքայապետ Մեսրոպ Հապոզեան, Հ.

կարգեալ Ամատունի եւ նոյն ինքն, այժմ հանգուցեալը: Վարդապետն դէմքով ինձ ծիծաղեցաւ եւ ընդունեց իմ որդիական պաշտամունքիս տաք համբոյրը իր վեհ ճակատին վրայ: Իր վերստին ընտրութեան առթիւ իմ շնորհաւորական նամակի ի պատասխան իր զրած նամակը եւ ըրած հրաւերը նորէն ուխտի երթալու մայր Վանքը, սուրբ նշխարքի նման կը պահպանեմ:

Արդարոց յիշատակը օրհնեալ լիցի:

Որդիական խոնարհ աջ համբուրելու յաւիտեանս իր յիշատակը եւ մի օր զինքը պահող գերեզմանին այցի ուխտ կատարող

Ձերդ խոնարհօրէն

Փրոֆ. ՀԱՅԿ Ա. ԱՐԱՄԵԱՆ

Փարիզ, 19 Մայիս 1965

Ազնիւ Հայրեր,

Խոր եւ տպաւորիչ տխրութեամբ կարդացի մահուն սեւ լուրը՝ մեր ամէնուս համար թանկագին, սիրուած, յարգուած Արքայապետ՝ Գրիգոր Սրապիոն Ուլուհոճեանի, Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան: Երկու ծանր կորուստները զորս ունեցաք յանձին Հ. Եղիա Վրդ. Փէշիկեանի եւ Արքայապետ Ս. Ուլուհոճեանի, միայն Մխիթարեան Հայրերը չեն սր կը սգան այսօր, այլ համակ Հայութիւնը, Հայ մտաւորականութիւնը, Հայ զըպրութիւնը: Իրենց կեանքը ծայրէ ծայր նուիրում եղաւ մեր Լեզուին, Մշակոյթին, Պատմութեան եւ Կրթական գործին: Ազդողուտ եւ մարդկօղուտ իրենց տարած լուս ու մունջ աշխատանքը, անչափելի համեստութեամբ եւ հաւատքով, իրենց սրտին պարզութեան, անկեղծութեան եւ ջերմութեան միացած՝ զիրենք դարձուցած էին մեր հիացումին եւ յարգանքին օրինակելի տիպարները: Ես անձնապէս երկուքին ալ բարեկամութիւնը վախելիլու անհոն պատիւը եւ երջանկութիւնը ունեցայ եւ զուգէ այդ պատճառաւ ալ տխրութիւնս մեծ է այսօր:

Վստահ եմ որ մեր անուշիկ Արքայապետը իր սիրած Սուրբերուն եւ հրեշտակներուն ընկերն ու խօսակիցն է այլեւս...:

Օրհնեալ ըլլայ իր Սուրբ Յիշատակը:

Ձերդ որդիական սիրով՝

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

Թեհրան, 26 Մայիս 1965

Սիրելի Արքայապետ,

Երէկ լսեցի անակնկալ եւ շատ տխուր լուրը մեր բոլորիս սիրելի՝ Գերապայծառ Ուլուհոճեանին մահուն:

35 տարի առաջ՝ Հայր Սրապիոն ա, ք, Գ-ը սորվեցուց ինծի... եւ ինծի պէս՝ չատերուն: Ամբողջ սերունդի մը ուսուցիչ եղած էր... եւ դաստիարակ, եւ բարեկամ, եւ Հայր: Ամէնքս մօտէն կը ճանչնար քանի սր իր դիւրահաղորդ բնաւորութեամբ հարեւանցի բարեկամութիւն չէր կրնար ունենալ:

Մանկութենէ անցանք երիտասարդութեան, ու յետոյ հասանք կեանքի կէս ճամբան, եւ ցրուեցանք աշխարհի չորս անկիւնները: Բայց միշտ կապուած էինք Արքայապետ հետ:

Դժուար է հաւատալ թէ այլեւս պիտի չլսենք իր ծիծաղը եւ իւրայայտուկ հիւմուրով իր պատմութիւնները: Կարպիս Ալէմշահի ըսածին պէս, կարծես էջ մը եւս պատուեցաւ մեր կեանքի զրգէն:

Ձոյդ արժանիքով՝ զիտակից ազգայնական էր եւ միանգամայն նուիրեալ հոգեւորական: Մխիթարեան Միաբանութեան լաւագոյն արժէքները կը մարմնաւորէր: Մեծ է կորուստը ազգին եւ եկեղեցւոյ: Մեծ է մանաւանդ կորուստը Միաբանութեան: Ոչ նուազ զգալի է կորուստը իր բազմաթիւ աշակերտներուն, որ բախտն ունեցան զինքը ճանչնալու: Ձինքը ճանչնալ կը նշանակէ՝ զինքը յարգել եւ սիրել:

Այս առթիւ՝ իմ սրտարուս ցաւակցութիւններս Ձեզի, սիրելի Արքայապետ, ինչպէս նաեւ բոլոր Հայրերուն:

Ձերդ վշտակից

ՆՈՒՎ. ԼԱԶՆԵԱՆ

Paris, le 23 mai 1965

Monseigneur,

La nouvelle de la mort de Son Excellence Monseigneur Oulouhodjian dont vous avez eu l'obligeance de me faire part, me remplit de peine.

Je vais donc, Monseigneur, vous présenter, ainsi qu'à la Communauté, mes condoléances les plus sincères.

J'espère avoir bientôt l'occasion de venir vous présenter mes respects et vous prie, Monseigneur, d'accepter mes hommages.

P. ISPENIAN

Paris, le 19 mai 1965

Monseigneur,

C'est comme un grand deuil familial que nous ressentons la triste nouvelle dont je viens de recevoir la faire-part.

A votre Excellence, à tout l'Ordre de Me-

Mhitar, auquel nous rattachent tant de liens, nous présentons, les miens et moi, nos plus profondes et respectueuses condoléances.

Nous nous sommes unis, ce matin, par la prière, à la cérémonie des obsèques.

C'est une grande et glorieuse figure qui disparaît avec Son Excellence Monseigneur Serapion Oulouhodian. Il a été le digne continuateur du saint Fondateur de l'illustre Congrégation que Vous gouvernez dans la même spiritualité.

Monseigneur Serapion fut pour nous un ami bienveillant et un guide éminent dans nos traditions religieuses les plus pures. Nous n'oublierons jamais l'accueil si affectueux, si attentif, qu'il voulait bien nous réserver, à ma famille et à moi-même, à chacune de nos rencontres à Venise et à Paris.

Il demeurera présent dans ma vie par son admirable traduction des Evangiles, dont l'exemplaire qu'il m'a remis est ma lecture quotidienne. Et que d'autres ont reçu cet enseignement de son œuvre!

L'Esprit demeure par là, que Dieu a voulu notre tuteur. dans la Grâce, en cette existence humaine et dans l'autre, où nous retrouverons, si nous en sommes dignes, ceux de ses Serviteurs que nous avons aimés et qui nous ont aimés, comme Celui qui nous a quittés.

C'est en renouvelant nos souhaits profonds pour la longue et glorieuse vie de l'Ordre de Mekhitar que je prie Votre Excellence de daigner agréer, Monseigneur, notre profond et filial respect.

CHRISTIAN DEDEYAN

Roma, 29 maggio 1965

Come telegrafai appena avuta da P. Paolo la tristissima comunicazione, sono rimasto addoloratissimo della fine del caro e venerato Padre Generale.

A Lui mi legava una lunga amicizia fatta di profonda stima e venerazione come per un Padre: ne apprezzavo oltre la amabilità, la bontà, la Sua profonda dottrina ed esperienza della vita: ed a Lui va il merito con il Suo aiuto ed i Suoi saggi consigli di avermi permesso di riuscire nel difficilissimo compito dell'ampliamento dell'Isola.

Sono anche sicuro che qualora i tempi del dopoguerra non fossero stati così tristi e

malvagi, Egli sarebbe anche riuscito a realizzare, se non tutto almeno in parte, il Piano di ampliamento della Abazia.

In ogni modo al Suo venerato Nome rimane legato il realizzato ampliamento e l'attuale sistemazione.

Al nuovo Padre Generale, che se ho ben capito, è il Padre Hemaigh, il mio devoto saluto e l'augurio che proseguendo l'opera del suo amato predecessore porti sempre più in alto le fortune della Congregazione e i suoi grandi meriti verso il Popolo Armeno.

A tutti i Padri che ricordo con tanta simpatia il mio cordiale saluto.

MARIO GAI

Mariano, 19 maggio 1965

Carissimo Padre Abate,

E' con vero dolore che ho appreso la notizia della morte di P. Serapione Uluhogian. Il ricordo che ho, che avrò esmpre di Lui è quello di un uomo profondamente giusto e buono, di un uomo che faceva luce attorno a sé. Mi permetta quindi, caro Padre Abate, di rivolgere a Lei e alla Congregazione le mie condoglianze per una perdita che vi ha colpiti tutti così dolorosamente.

Suo devotissimo

Dott. MANUG EMEGIAN

Պէյրուք, 19 Մայիս 1965

Գերազանցաւ Տէր,

Սրտի անհուն կսկիծով իմացայ մահը Արհի-Արքեպս. Ուլուհոսեանի, ազգանուէր Միաբանութեան անձնանուէր եւ բազմաբարեւ Արքաւոր:

Մեծ է կորուստը, խորունկ՝ ցաւը: Նուիրեալ Առաքեալին, տխար Հայրենասէրին, անուղական Մատային յիշատակը մեր սրտին խորը պիտի մնայ յաւիտ ինկելի:

Տիկնոջ եւ իմ անունով կը խնդրեմ որ հաճի՞ր ընդունիլ եւ փոխանցել սգակիր Միաբաններու ցանկեղծ ցաւակցութիւններ եւ սրտազեղ աղօթքի փունջ մը:

Յարգանքներով Գերազանցաւ

Տէրութեանդ

ՎԱՋԳԷՆ ԱՅԳՈՒՆԻ

Ժընև, 27 Մայիս 1965

Գերազանցաւ Գերազանցաւ,

Հազիւ արձակուրդից վերադարձած, գտայ մեր անմոռանալի Գրպ. Հ. Սրապիոն Արքեպիսկոպոսի մահացումը, որը ինձ շատ մեծ ցաւ պատճառեց: Գիտէի որ Գերազանցաւը Lidori հիւանդանոցը կը դառնուէր զանազան բժշկական բնութեանց ենթարկուելու համար, բայց երբեք չէի երազեր որ իր վիճակը այդ աստիճան ծանր է եղել:

Միխիթարեան Միաբանութեան այնչափ ազնիւ եւ գնահատելի անգամի մահը անփոխարինելի կորուստ է վանքի համար: Շատ եմ ցաւում որ մի վերջին անգամ իրեն տեսնելու առիթը չունեցայ: Մեր սիրելի Հ. Եղիայի մահից յետոյ Գրպ. Հ. Ուլուհոսեանի կորուստը մեծ վիշտ է բոլոր ներանց որ զինքը ճանաչելու բախտը եւ պատիւը են ունեցել:

Յայտնում եմ Ձեզ, Գերազանցաւ, եւ բոլոր Միխիթարեան Հայրերին, իմ սրտազին ցաւակցութիւնը եւ ցաւում եմ որ պարագաների բերմամբ չկարողացայ զոնէ ներկայ դառնալ ննջեցեալի թաղման:

Խորին յարգանք եւ բարեամբ
Ձերդ

Բժ. Շ. ՓԻԼՈՍԵԱՆ

Նախկին սան Մ.-Ռաֆ. Վրժ.ի

Fontenay-aux-Roses, 19 Մայիս 1965

Գերազանցաւ Արքաւոր

Եւ Վ. Վ. Վարդապետներ,

Հոգեկան խոր կսկիծով համակեց զիս Գերապ. Սրապիոն Վրգ. Ուլուհոսեանի մահուն զոյժը բերող թուղթը, որ այս առտու ձեռքս հասաւ, երբ՝ նոյն պահուն, վանքիդ մէջ անոր թաղման տխուր արարողութիւնը կը կատարուէր:

Ի հոռուստ՝ ես ալ, մտքովս ու հոգեկանապէս, մասնակցեցայ Ձեր աղօթքին, ննջեցեալին հոգւոյն յերկինս լոյսերու մէջ փառաւորման համար:

Կը յիշեմ ողբացեալ մօրս յուզարկաւորութեան, 1931 Մայիս 10ին, ինքն ալ՝ Հ. Օհան Վրգ. Արքաւոր, Հայր Սահակ եւ Հայր Վրթանէս վարդապետներու հետ, ներկայ էր, եւ գերեզմանատան մէջ Հ. Սահակ դամբանական խօսեցաւ:

Երկու տարի առաջ ալ, ողբացեալ իր վերջին անգամ Փարիզ դալուն, պատիւն ունեցանք իր այցելութիւնն ընդունելու, Ֆոնթենէ-օ-Ռոզի մեր բնակարանին մէջ, Հ. Սեբոթէ Վ.ի եւ երկու ուրիշ իրեն ընկերացող վարդապետներու հետ: Ուստի ընտանիքիս անգամները եւս զինքը ճանչցած ըլլալով, բոլորս միասին կը ներկայացնէր Պատ.

Միաբանութեանդ Գերազանցաւ Արքաւոր, Գեր. վարդապետներուն մեր խորին ցաւակցութիւնը:

Եւ սիրազեղ ողջունիւ, կը մնամ Ձերդ

ՕՐՈՆ Յ. ՀԵՔԻՄԵԱՆ

Նախկին սան Մ.-Ռաֆ. Վրժ.ի

Հալէպ, 21 Մայիս 1965

Գերազանցաւ Տէր,

Անհուն տխրութեամբ կու գանք, Հալէպի Միխիթարեան Արքեպիսկոպոս, ցաւակցելու լուսահոգի Գրպ. Ուլուհոսեանի յաւիտ կորստեան: Թող Աստուած նորանոր մշակներ հասցնէ Միխիթարի ազգօգուտ Այգիին: Շատ մեծ եղաւ սուգերնիս, քանի հանգուցեալը սերտ կապ հաստատած էր Արքեպիսկոպոս հետ ու մօտէն կը հետաքրքրուէր մեզմով, մանաւանդ տեսարար ետեւէ էր շուտով շինելու նոր վարժարանը: Սակայն վստահ եղէք, Գերազանցաւ Տէր, որ մենք Միխիթարեան Արքեպիսկոպոսի ջանքեր մեր կարելին ընել նոյն այս սիրելի Միաբանութեան սուրբ գործը շարունակելու, հետեւելով Սկանուական մեր խոստումներուն եւ Միխիթ. աշակերտի կոչումին՝ միշտ վառ պահել Միխիթար Արքաւոր ջանք: Թող անթառամ մնայ յիշատակը արդարներուն, մանաւանդ մեր շատ սիրելի Սրապիոն Արքեպիսկոպոս Ուլուհոսեանին:

Կրկնելով մեր ցաւակցութիւնները ու օրհնութիւննիդ խնդրելով մնանք Ձեր ուխտապահ Միխիթարեան Արքեպիսկոպոս:

Ի զիմաց Մ. Հ. Ա.ու Խորհուրդի

Եւ ՓԱՆՈՅ ՓԱՓԱՏԱՔԻՍ

Խմբապետ Մ. Հ. Ա.ի

Թորոնթոյ, 28 Մայիս 1965

Միխիթարեան Արքաւոր,

Անշուշտ գոհուար եղաւ զրիս ձեռքս առնել, եւ նման տխուր պարագայի մը՝ մարդս կը նախընտրէ ինքն իր մէջ սպաւ. բայց պարտականութիւնը մզեց զիս զրեւելու այս նամակը եւ դուրս դալու ներքին աշխարհէս:

Ինձի հարազատ արեան կապով Եպիսկոպոս Սրապիոն Ուլուհոսեանը եւ միանգամայն քաջ նաւովարը Միխիթարեան Միաբանութեան, որուն արժանաւոր յաջորդն էք այսօր՝ իր բեղուն կեանքով եւ միանգամայն հարուստ սրտով, եղաւ Հայր մը իր շուրջիններուն, ըլլան անոնք օտարներ, հարազատներ եւ կամ միաբան եղբայրներ:

«Հայրենիք» Թերթին միջոցաւ ստացայ իր վախճանման լուրը. անշուշտ զիտէի թէ առողջական

վիճակը կը վատթարանար օրէ օր: Ի հարկէ՝ այս-
պիսի հիւանդութիւն մը անբուժելի է եւ միայն
զղացողը կը հասկնայ տառապանքին չափը:

Աստուածային կամքը հզօր է եւ մեր մարդ-
կային էութիւնը զփութարօրէն կը հաշտուի մահ-
ուան զաղափարին եւ երբ մեկնողը կը ձգէ պա-
րապուծիւն մը իր ետին. բայց ի վերջոյ երանելի
մահ մը՝ մեծազոյն պարգեւն է, որ Ամենակալը
կը պարգեւէ արժանի զաւակներուն:

Յաւը խոր է բոլորիս համար եւ անշուշտ Միա-
բանութիւնը մեծազոյն հարուածը կը բաց սիրելի Հ.
Եղիային վախճանումէն անմիջապէս յետոյ: Անոնք
միացան միւս մեծարժէք Միթարեաններու երկ-
նային հոյլին եւ իրենց բարեխօսութիւններով՝ կը
պահեն անասան Ս. Ղազարը:

Մեզի չի մնար այսօր անոր ներքողը հիւսել.
որովհետեւ Արքահայրը հարազատ մըն էր եւ ար-
դէն զիտներ իր Սրբութիւնը եւ հսկայ դործունէու-
թիւնը: Ան այսօր գտած է իր վարձատրութիւնը
եւ կը վայելէ յաւիտեական կեանքը. բայց՝ անոր
ժպիտը եւ անոյշ ձայնը մեր հետ չէ ու քանի եր-
կրային արարածներ ենք՝ պիտի փնտռենք զինքը:

Սգակից մըն եմ եւ ինձմէ շատ աւելի Դուք էք
ու Միաբանութիւնը եւ նաեւ Ս. Եկեղեցին. այն-
պէս որ՝ կ'ուզեմ բաժնել Ձեր վիշտը եւ յայտնել
իմ խորին ցաւակցութիւններս:

Կրկին անգամ ընդունեցէք իմ զղացումներս եւ
հաղորդեցէք միաբան հայրերուն:

Ձերդ յարգանքը եւ վշտով՝
ԵՐՈՒԱՆԻ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
ՆԱԽԿԻՆ ԱՂ. Մ.-ՌԱՓ. ՎՐԺ.Ի

Յաւակցական տոմսեր ուղարկած են
Միաբանութեանս Ընդհ. Արքահօր, նաեւ
հետեւեալ անձնաւորութիւնները, որոնց
անուններն ալ սիրով կը թուենք այստեղ.

Բժ. Հէյդույեան (Հոռմ), Բժ. Կարպիս Գոսա-
պեան (Միլանոյ), Բժ. Ազատ Եսայեան (Փար-
մա), Տէր եւ Տիկ. Ռ. Շմէլիկեան (Ուստըր),
Տէր եւ Տիկ. Բ. Շմէլիկեան (Ուստըր), Տիկ Եւ-
զինէ Թանտրճեան (Տիթրոյիթ), Յովսէփ Ուլուհո-

ճեան (Տրանսի), Անահիտ Սիմանեան (Միլան),
Քիլարճեան (Նիւ Եորք), Մ. Շահնազարեան
(Փլովադ), Տիգրան (Մասուէլ Հիլ), Յովհ. Գուս-
տիկեան (Ուստըր), Վահէ Զինճիբեան (Թրիես-
թէ), Գրիգոր Կիւլպէնկեան (Միլան), Ստեփան
Տայեան (Մոնրէալ), Աննա Շահրիկեան եւ Որդիք
(Տիթրոյիթ), Երուանդ Տրեհց Մարգարեան (Սան
Րեմոյ), Սողոյեան ընտանիք (Քոնսէլիէ), Տիւրի-
զեան ընտանիք (Միլանոյ), Հրանդ Սարգիս Ռըշ-
տունի (Պուտափէշտ), Լուիճի եւ Հեղինէ Ճաքո-
մելլի (Փատովա), Գոնտաքճեան ընտանիք (Փա-
տովա), Ատրինէ Աղլակահեան (Նափոլի), Յակոբ
Այնթապլեան (Հոռմ):

Mons. Ang. Fraccaro, Arciprete di S. Ze-
none degli Ezzelini; Fr. Emilio di S. Giusep-
pe, Priore dei PP. Carmelitani Scalzi di Ve-
nezia; P. Superiore dei PP. Gesuiti dell'As-
sunta (Venezia); P. Joseph David (Mar-
seille); P. Alfredo Berin, Superiore di S.
Michele in Isola (Venezia); Dott. Davide
Turri, Capo del Gabinetto della Questura
di Venezia; Giovanni M. Silvestri, Sindaco
di S. Zenone degli Ezzelini; Sostene Claudio
Malavasi, Segretario Capo del Comune di
S. Zenone degli Ezzelini; Caso, M^o Di-
rettore della Banda Municipale di Vene-
nezia; Giuseppe Piasentini, Secretary Bri-
tish Consolate, Venice; M. Blacco, Direttore
della Banca Cattolica del Veneto (Venezia);
Prof. Dott. Enrico Polichetti (Venezia); Dott.
Prof. Pietro Lizier (Venezia); Cav. Bruno
Vianello (Venezia); Comm. Dott. Attilio Ba-
tagel (Venezia); Cav. Mario Vidotti (Vene-
zia); Carlo Rossi (Milano); Dott. Ing. Tullio
Toninato (Venezia); Dott. Ettore Trivelli
(Trieste); Adele Barbini (Venezia); G. To-
nitto (Venezia); Vandelli (Venezia); Gr. Uff.
Dott. M. Spessa (Vicenza); Antonio e Olga
Izzo (Roma); Carlo Mascarin (Lido); Rodol-
fo Dalla Nora (Padova); Anne Hodges (Di-
xon); A. L. Scott (Cranston); Fam. Maurizio
(Trento); Girolamo Lucchetto (Venezia).

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԱՐԷԼԵԱՆ ՀՐԱՆԴ. - Սեւ Ապրիլ 24ը - 1915: Նոր
Ապրիլ 24ը - 1965: Փարիզ, տպ. Արաքս, 1965,
էջ 120:

ԱՂԳԱՐԵԱՆ ԳԱՌՆԻԿ. - Մատեն ցաւի եւ հա-
տուցման: Պէյրութ, տպ. Ատլաս, 1965, էջ 59:

ԱՀԱՐՈՆԵԱՆ ԳԵՐՍԱՄ. - Մեծ Երազի ճամբուն
վրայ... (Ակնարկ հայկական հարցի պատմու-
թեան վրայ): Պէյրութ, տպ. Ատլաս, 1964, էջ
224:

ԱՍՏՏՈՒՐԵԱՆ ՅԱԿՈԲ. - Կոմիտաս Վարդապետ եւ
Հայ Երզը: (Նիւ Եորք) Պէյրութ, տպ. Ատլաս,
1963, էջ 91:

ԱՏԵՐՀՈՎ (Արշաւիր Տէր Յովհաննիսեան). - Հու-
մակերութեան ուղիներով: Թեհրան, տպ. Մո-
ղերն, 1965, էջ 184:

ԱՐԱՐԱՍ ԱՆԴՐԱՆԻԿ. - Անաւարտ ուղին (Բանա-
ստեղծութիւններ): Պէյրութ, տպ. Սեւան, 1964,
էջ 87:

ԱԽԱԳԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ. - Արձագանդ մարդկային
զգացման: (Ոտանաւոր եւ արձակ քերթուած-
ներ): Պէյրութ, տպ. Տօնիկեան, 1963, էջ 173:

ԳԱԶԱՆԺԵԱՆ ՌՈՒԲԷՆ. - Կեանքը - քոյրս (Բա-
նաստեղծութիւններ): Փարիզ, տպ. Յառաջ,
1964, էջ 75:

ԳԱԼՅԱՅԵԱՆ ԱԽԵՏԻՍ Յ. - Մանկական 10 թա-
ւրեքութիւններ: Իսթանպուլ, տպ. Հերմոն,
1965, էջ 125:

ԳԱՏԵՄԵԱՆ ՍԱՐԳԻՍ. - Բողոքի քրանսական ու-
ճերու: Պէյրութ, տպ. Ալ-Խալ, 1964, էջ 135:

ԳԱՐԱՄԱՆԵԱՆ ԱՆԴՐԵԱՍ. - Գաղութահայեր...
իրականացնէ մեր համազգային կեդրոնական
միացեալ ճակատը: Պուէնոս Այրէս, տպ. Արա-
քա, 1963, էջ 14:

ԳԵՐԳԵԱՆ ԿԱՐՕ. - Ամէնուն Տարեգիրքը, 1965
(ԺԲ. տարի): Պէյրութ, տպ. Մշակ, 1965 էջ
688:

ԳԻՏԱԿԻՅ ԱՐԱՄ. - Արարական աստղերու տակ
հողիս կ'երգէ: Հալէպ, տպ. Անի, 1964, էջ 159:

ԴԱՐԵԱՆ ԱՐՄԷՆ. - Խաբիսին հեռու (Պատ-
մուածքներ): Պէյրութ, տպ. Ատլաս, 1914, էջ
190:

ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. - Պատանի արտիստը: Պուէնոս
Այրէս, 1963, էջ 75:

ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. - Ս. Հայաստանի աղջիկն եմ
ես (Խօսք եւ երաժշտութիւն): Վիեննա, Միթ.
տպ. 1964, էջ 4:

ԶԱՐԶԱԼԻԹԵԱՆ ԹՈՎՄԱՍ Պ. - Ամբողջական
բանաստեղծութիւնը եւ հատընտիր գրութեք:
Ֆիլատելֆիա, 1959, էջ 108:

ԹՈՐՈՍԵԱՆ ՅԱԿՈԲ. - Լեզուաշինութիւն (Համազ-
գային զրական լեզուի մը կերտումին ի խնդիր):
Պէյրութ, տպ. Զարթօնք, 1964, էջ 67:

ԹՈՐՈՍԵԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ. - Էջեր զրականութեան
եւ արուեստի: Պէյրութ, տպ. Նաթահ, 1965,
էջ 100:

ԹՕԺԵԱՆ ԲԱՐԳԷՆ ՎՐԴ. - Կիլիկեան շրջան (1375
-1441): Անթիլիաս, տպ. Կթղ. 1965, էջ 108:

ԼԱՊԷՆ ՍԻԻԶԱՆ. - Խորհրդային Միութիւնը եւ
Թեհրան Երկիրները: Միւնիխ, 1962, էջ 67:

ԽԱՅԻԿԵԱՆ Գ. Գ. - Ճշմարտեք՝ պատճառ երկ-
տասարկացման: Պէյրութ, տպ. Շիրակ, 1965,
էջ 160:

ԽՐԱՆՈՒՆԻ ԶԱՐԵՀ. - Ես եւ ուրիշներ (Բանա-
ստեղծութիւններ): Իսթանպուլ, տպ. Հերմոն,
1965, էջ 72:

ԽՐԱՆՈՒՆԻ ԶԱՐԵՀ. - Քար - Կաթիլներ (Քեր-
թուածներ): Իսթանպուլ, 1964, էջ 70:

ԿԻԼԻԿԵԱՆ ՎԱՀԷ. - Յուշամատեն Աւետիս
Մ. Գալէմբեարեանի: Պէյրութ, տպ. Տէր-Սա-
հակեան, 1965, էջ 224:

ՀԱՏՏԷՃԵԱՆ Ռ. - Յակոբ Պարոնեանի մտերմու-
թեան մէջ: Իսթանպուլ, 1965, էջ 80:

ՀԵԼՎԱՅԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՆ. - Յուշագիրք Վեր-
Ա. Օ. Փափաղեանի (մահուան տասնամեակին
առթիւ): Փարիզ, տպ. Արաքս, 1965, էջ 111:

ՀԷՔԻՄԵԱՆ ՕԹՈՆ Յ. - Սկիզբն երկանց (Թատե-
րական ողբերգութիւն երեք արարով): Պէյրութ,
տպ. Մասիս, 1965, էջ 69:

ՃԱՆԵԱՆ ԱՐՄԷՆ. - Արեւուն տակ (Քերթուած-
ներ): Իսթանպուլ, 1962, էջ 80:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

Խառնիկ համար . . .	3500 Լիր
Արտասահմանի համար . . .	8 Տոյր
Մէկ թիւը՝ 250 թիւ . . .	0,50 Տոյր

PRIX DE L'ABONNEMENT ANNUEL

Pour l'Italie . . .	3500 Lires
Pour l'Etranger . . .	8 Dollars
Le Numéro: 250 Lires - 0,50 Dollars	

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼԻԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆՆ ԵՊԱՍՏՈՎ
PUBLIE AVEC LE CONCOURS DE LA «FONDATION CALOUSTE GULBENKIAN»

